ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ/ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

1.Շինարարության քաղաքականություն

Հատուկ նշանակություն տալով հանրապետությունում կրթական, մշակութային և մարզական օբյեկտների հիմնանորոգման ու կառուցման խնդիրներին, նախարարությունը՝ որպես ոլորտի պատասխանատու, որդեգրել է շինարարական ծրագրերի իրագործման նոր ռազմավարական սկզբունքներ: Մասնավորապես՝

- բացառել անբավարար տեխնիկական վիճակում գտնվող օբյեկտներում հիմնանորոգումների իրականացումն առանց դրանց ուժեղացման-վերականգնման աշխատանքների կատարման՝ ելնելով հանրապետության ողջ տարածքի բարձր սեյսմաակտիվ գոտում գտնվելու հանգամանքից.
- վերհանել բյուջեում ընդգրկված 2-րդ և 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող օբյեկտներն ու գնահատել դրանց սեյսմազինվածության աստիճանը.

Մշակված նոր ռազմավարության ներքո գոյություն ունեցող շինօբյեկտներում հիմնանորոգման խնդիրները այսուհետ փոխարինվելու են ավելի մեծածավալ, սակայն առավել հուսալի միջոցառումներով, որոնք հետագայում կապահովեն կարևորագույն օբյեկտների սեյսմիկ անվտանգության նվազագույն պահանջները:

Ռազմավարական նոր մոտեցումներից է նաև երկար տարիներ շարունակական բնույթ կրող օբյեկտների շինաշխատանքները ավարտին հասցնելը, որի արդյունքում 2013 թվականին ավարտվել են 14 օբյեկտնեում շինարարական աշխատանքները: Մոտ 20 օբյեկտներ նախատեսվում է ավարտել նաև 2014 թվականին: Հաջորդ կարևորագույն ռազմավարական խնդիրը օբյեկտների ընտրության առաջնահերթության հարցն է՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային համաչափ զարգացման սկզբունքը:

Վերը նշված խնդիրների լուծմանը համակարգային մոտեցում ցուցաբերելու նպատակով կազմվել և ՀՀ կառավարության հավանությանն են արժանացել “Առաջնահերթ հիմնանորոգման, կառուցման և արդիականացման ենթակա կրթական, մշակութային և մարզական օբյեկտների ցանկերը”, որոնցում ներառվել են թվով 514 կրթական, թվով 358 մշակութային և թվով 63 մարզական օբյեկտների վերաբերյալ տեղեկություններ, տրվել են շինարարական աշխատանքների տեսակների, ծավալների և ֆինանսական միջոցների խոշորացված գնահատականները: Ցանկերում ընդգրկված օբյեկտների գերակշիռ մասը գնահատվել է վնասվածության 2-3-րդ աստիճանով, ուստի ողջ համալիրը դասակարգվել է որպես վերակառուցման ենթակա՝ սեյսմազինվածության մակարդակի բարձրացման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցառումների կիրառմամբ:

Առաջնահերթությունները որոշելիս, բացի շենքերի վնասվածության գնահատականից, հաշվի են առնվել նաև շահագրգիռ մարմինների դիրքորոշումները, օբյեկտների բեռնվածության մակարդակը, շահառուների թիվը, շինությունների մաշվածությունը և գտնվելու վայրը, ինչը կարևոր նշանակություն ունի մեր երկրի տարածքային համաչափ զարգացման տեսանկյունից: Պարբերաբար ցանկերը կլրամշակվեն և կճշգրտվեն, որոնց հիման վրա կձևավորվեն ՀՀ ՄԺԾԾ-ի և ՀՀ տարվա պետական բյուջեի նախագծերը՝ շինարարության մասով, այդ թվում՝ նախորդ տարիներին սկսված օբյեկտներում շարունակական բնույթ կրող և ավարտին հասցվող աշխատանքները, ինչը ևս կնպաստի պետական բյուջեից ստացվող գումարների օգտագործման արդյունավետության բարձրացմանը:

Նախարարության գերակա խնդիրներից է նաև՝ պետական, համայնքային և մասնավոր սեփականություն հանդիսացող անավարտ /կիսակառույց/ և չշահագործվող շենքերի ու շինությունների հաշվառման շտեմարանի ստեղծումը: Նախարարության կողմից հավաքագրվել են Երևան քաղաքի և մարզերի շուրջ 240 կիսակառույց շենքերի տվյալներ: Շտեմարանի ստեղծումից հետո, հաշվի առնելով տվյալ կիսակառույցի գտնվելու վայրը, սոցիալական նշանակության բնակարանային պահանջարկը և կիսակառույցի տեխնիկական վիճակը, կկազմվեն տեխնիկատնտեսական հաշվարկներ՝ տվյալ օբյեկտի

շինարարական աշխատանքներն ավարտին հասցնելու համար, ինչպես նաև կներկայացվեն համապատասխան միջոցառումներ, որոնք կկիրառվեն շինարարությունը ժամկետին ավարտելու հետ կապված պարտավորությունները չկատարած սուբյեկտների նկատմամբ:

Գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման կարգի լրամշակման աշխատանքները ավարտին հասցնելու նպատակով ՀՀ վարչապետի 2013 թվականի հունիսի 20-ի N 483-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի առաջարկությամբ կազմվել է << Շինարարական նորմատիվների մշակման և շինարարական աշխատանքների արժեքի վերլուծության հանրապետական կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Կենտրոնի գործունեության նպատակները կլինեն՝ քաղաքաշինության բնագավառի, այդ թվում՝ շինարարությունում գնագոյացման համակարգի նորմերի և չափորոշիչների, նորմատիվային ակտերի և գործող գներով շինարարական աշխատանքների արժեքի հաշվարկման մեթոդաբանության մշակումը, նյութերի, ռեսուրսների արժեքի փոփոխման ինդեքսի հաշվարկման նպատակով համապատասխան վերլուծությունների ու հաշվարկների հիման վրա՝ կապիտալ ծախսերի և հիմնանորոգման համար կիրառվող նյութերի ցանկի կազմում դրանցից յուրաքանչյուրի տեսակի կշռի որոշումը, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների կառուցվածքում աշխատավարձի և կապիտալ ներդրումների կառուցվածքում շինմոնտաժային աշխատանքների ծախսերի մասնաչափի հաշվարկումը:

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվում է շինարարության ոլորտի զարգացման ծրագիրը:

2. Շինարարական ծրագրեր.

ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվել են շուրջ 5600.0 մլն. դրամի շինարարական և նախագծման աշխատանքներ, որից՝

- 3400.0 մլն. դրամի 58 հանրակրթական և ավագ դպրոցների, միջին մասնագիտական կրթության հաստատությունների, մարզադպրոցների հիմնանորոգման,վերակառուցման և կառուցման (այդ թվում կիսակառույց թվով 9 բնակելի շենքերի ավարտման), ինչպես նաև շուրջ 380.0մլն.դրամի նախագծանախահաշվային փաստաթղթերի լրամշակման և մշակման աշխատանքներ:
- 1800.0 մլն. դրամի ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով ամրագրված հիմնական ծրագրերի ՀՀ կառավարության առանձին որոշումներով և պահուստային ֆոնդի հաշվին իրագործվել են նաև թվով 31 օբյեկտների ավարտն ու հիմնանորոգումն ապահովող նախագծման ու շինաշխատանքների կատարման անհետաձգելի միջոցառումներ:

Մասնավորապես՝

- ըստ նախագծանախահաշվային փաստաթղթերի ավարտի են հասցվել ՀՀ 2013 թվականի պետբյուջեի թվով 12 օբյեկտներ, ինչպես նաև ՀՀ կառավարության առանձին որոշումներով նախատեսված 31 օբյեկտներից 2-ը (ընդամենը՝ 14 օբյեկտ).
- թվով 22 օբյեկտներ ներկայացվել են վերանախագծման.
- թվով 24 օբյեկտներ ներկայացվել են տևական շահագործման:

ՀՀ 2012 թվականի հաստատված պետական բյուջեի և ՀՀ կառավարության որոշումներով հատկացված լրացուցիչ գումարների հաշվին իրագործվել են շուրջ 10800.0 մլն.դրամի շինաշխատանքներ, որից՝

- 7600.0 մլն. դրամի 107 հանրակրթական և ավագ դպրոցների, միջին մասնագիտական կրթության հաստատությունների, մարզադպրոցների հիմնանորոգման, վերակառուցման և կառուցման աշխատանքներ:
- 3200.0 մլն. դրամի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանային շինարարության աշխատանքներ:

2012 թվականին իրականացված աշխատանքների արդյունքում ավարտի են հասցվել թվով 28 օբյեկտներ:

2012-2013թթ. թվականներին քաղաքաշինության նախարարությունը տնտեսել է մոտ 1500 մլն. դրամ, որը ամբողջությամբ վերադարձվել է պետական բյուջե:

Շինարարական աշխատանքների պետական գնումները կազմակերպվել են բաց և թափանցիկ ընթացակարգով՝ մրցույթների հայտերի ներկայացման էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև համացանցով մրցույթների անցկացման առ ցանց ռեժիմով ցուցադրությամբ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1.Բնակարանային ոլորտ.

1.1. Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծմանն ուղղված պետական աջակցության ծրագրի շրջանակներում՝

1) ՀՀ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած 3555 ընտանիքներ ճանաչվել են ծրագրի շահառու, որոնցից՝

- 1946 ընտանիքների (ք.Գյումրի՝ 1756, ք.Սպիտակ՝ 14 և ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր՝ 176) բնակարանային խնդիրները լուծվել են բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում կառուցված բնակարանների (բնակելի տների) հատկացմամբ.

- ՀՀ Լոռու, Շիրակի և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերում 1 սենյակի շահառու ճանաչված 321 ընտանիքների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ յուրաքանչյուրին 3.0 մլն.դրամի չափով.

- 1288 ընտանիքների (այդ թվում՝ ըստ կանխատեսումների դատական կարգով բնակապահովման իրավունքը վերականգնած 27 ընտանիքների) բնակարանային խնդիրները նախատեսվում է լուծել աղետի գոտու բնակավայրերում 2014 թվականին իրականացվելիք բնակարանային շինարարության ծրագրի շրջանակներում:

2) շարունակվել է ծրագրի շրջանակներում կառուցված բազմաբնակարան շենքերի բնակարանների, ինչպես նաև բնակելի տների նվիրատվության պայմանագրերի կնքման գործընթացը (թվով 388, որից ք.Գյումրի՝ 225, ք.Սպիտակ՝ 63, ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրեր՝ 100):

3) կարգավորվել են ծրագրի իրականացման ընթացքում ծագած խնդիրները՝ ՀՀ կառավարության կողմից ընդունված թվով 10 որոշումներով:

Աղետի գոտու բնակավայրերում պետական աջակցությամբ իրականացված բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում կառուցվել են 3783 բնակարաններ (բնակելի տներ) և 382 ընտանիքներ բարելավել են իրենց բնակարանային պայմանները տրամադրված ֆինանսական աջակցության միջոցով:

Դրա հետ մեկտեղ, 2014 թվականին նասխատեսվում է կառուցել ևս 1288 բնակարաններ (բնակելի տներ), որոնցից 819-ը գտնվում են շինարարության ընթացքում:

Այդպիսով, ծրագրի իրականացման արդյունքում բնակարանային պայմանները բարելաված ընտանիքների թիվը կկազմի մոտ 5500:

1.2. Բնակարանային ոլորտում առկա առանձին խնդիրների կարգավորման ուղղությամբ մշակվել և՝

- ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել ՀՀ տարածքում (բացառությամբ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում ընդգրկված բնակավայրերի) քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող, ինչպես նաև քանդված բնակարանային ֆոնդի բնակիչներին անվտանգ բնակելի տարածքով ապահովման հայեցակարգը և դրա կիրառկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը.

- ՀՀ կառավարության որոշմամբ կարգավորվել են Մարալիկ քաղաքի քանդման ենթակա N5 վթարային շենքի բնակիչների վերաբնակեցման՝ անվտանգության ապահովման, ինչպես նաև Մարալիկ քաղաքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման հետ կապված հարցերը.

- ՀՀ կառավարության կողմից հավանությանն է արժանացել սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման ռազմավարական ծրագիրը և ծրագրի կիրարկումն ապահովող միջոցառումների ժամանակացույցը: Ծրագրի իրականացմամբ ակնկալվում է պետական-մասնավոր գործընկերության գործիքների կիրառմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ինստիտուտի ներդրման համար ստեղծել

հիմքեր, և այդ ֆոնդում սոցիալական տարբեր խմբերում ընդգրկված անձանց խառը բնակեցման միջոցով ապահովել ինչպես հասարակության մեջ նրանց ինտեգրումը, այնպես էլ ստեղծվող ֆոնդի արդյունավետ կառավարումը: Բացի այդ, խառը բնակեցումը կնպաստի սոցիալական բնակարանային ֆոնդի ստեղծման հարցում մասնավոր ներդրողների հետաքրքրության բարձրացմանը՝ նպաստելով թե՛ այդ ուղղությամբ պետության բեռի թեթևացմանը, թե՛ հանրապետությունում շինարարության բնագավառի զարգացմանը և բացի սոցիալական նկատառումներից կձևավորվեն նախադրյալներ՝ սոցիալական բնակֆոնդի հիմնադրման ուղղությամբ հանրային ռեսուրսների ներգրավման համար:

2. Կոմունալ ոլորտ.

2.1. Շենքերի էներգաարդյուանվեկության բարձրացում

- Նախարարության կանոնադրությունում սահմանված կարգով ներառվել են քաղաքաշինության բնագավառում էներգախնայողությանը և էներգաարդյունավետությանն առնչվող գործառույթները.
- ««Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով՝ ի թիվս այլ խնդիրների, նախատեսվել է շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանն առնչվող հարցերի կարգավորում.
- ՀՀ բնապահապանության նախարարության հետ համատեղ համակարգման ներքո գտնվող ՄԱԿ-ի Զարգացման ծրագրերի աջակցությամբ Գլոբալ Էկոլոգիական ֆոնդի կողմից իրականացվող «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում մշակվել են իրավական և նորմատիվատեխնիկական դաշտի կատարելագործմանն ուղղված առաջարկությունները, նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկը, կազմվել է ջերմամեկուսիչ շինարարական նյութերի շտեմարանը, ինչպես նաև ծրագրի աջակցությամբ իրականացման փուլում են գտնվում ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան համայնքում նոր կառուցվող և Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Դ.Վարուժան թաղամասի N6 բազմաբնակարան շենքերում էներգաարդյունավետ և էներգախնայող միջոցառումների կիրառմամբ երկու փորձնական ծրագրերը:
- ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձաժողովի (ԵՏՀ) 2013 թվականի հոկտեմբերին կայացած նախարարական կոմիտեի 3-րդ նիստին և ՄԱԿ ԵՏՀ-ի բնակարանային տնտեսության և հողերի կառավարման կոմիտեի 74-րդ ամենամյա նստաշրջանին նախարարության կողմից ներկայացված՝ 2014-2015 թվականներին Հայաստանում երկրի նկարագրի ուսումնասիրությունների և <էներգաարդյունավետ բնակարաններ> թեմայով դասընթացները հնարապետությունում անցկացնելու վերաբերյալ առաջարկություններն ընդունվել և ներառվել են ՄԱԿ ԵՏՀ-ի բնակարանային տնտեսության և հողի կառավարման 2014-2015 թվականների գործունեության ծրագրում:

2.2. ***Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների շահագործման խնդիրներ***

- Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և դրանից բխող մի շարք օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսվում է հստակեցնել գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները, հուղարկավորության կազմակերպման պետական, տարածքային կառավարման և համայնքային կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները, ինչպես նաև մասնավոր գերեզմանատների ինստիտուտի ձևավորման սկզբունքներն ու մոտեցումները:
- հանրապետության գերեզմանատներում առկա իրավիճակը շտկելուն ուղղված միջոցառումների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարի հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ և հաստատվել իրականացվելիք միջոցառումների ժամանակացույցը:

2.3. ***Ժամանակակից աղբավայրերի ստեղծում***

Նախարարությունը մասնակցել է Ասիական Զարգացման բանկի կողմից իրականացվող «Հայաստանում կոշտ թափոնների կառավարման ազգային ռազմավարության մշակում», Եվրամիության աջակցությամբ ՀՀ Լոռու մարզում իրականացվող «Թափոնների կառավարում-ԵՀԳԳ Արևելք» տարածաշրջանային, ինչպես նաև գերմանական KFW բանկի կողմից իրականացվող ՀՀ Լոռու մարզի Վանաձորի տարածաշրջանային աղբավայրի ստեղծման ծրագրերի համակարգման աշխատանքներին:

ԻՆԺԵՆԵՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ կառավարության ծրագրի «Քաղաքաշինությունը» բաժնի հիմնական ուղղություններից բխող՝ հանրապետությունում շենքերի ու շինությունների տեխնիկական տվյալների բազայի ստեղծման նպատակով, ՀՀ կառավարության 2012 և 2013 թվականների գերակա խնդիրների կատարման համար, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2012 թվականի հուլիսի 27-ի N 161 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի գործունեության շրջանակներում հավաքագրվել, ուսումնասիրվել և համակարգչային ծրագիր են մուտքագրվել թվով 3520 բնակելի և հասարակական նշանակության շենքերի վերաբերյալ տեխնիկական տվյալներ: Հավաքագրված տվյալները տրամադրվել են «Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ» ԲԲ ընկերությանը՝ միասնական տեղեկատվական բազայում ամփոփելու համար: Շենքերի և շինությունների տեխնիկական տվյալների միասնական տեղեկատվական բազայի առկայությունը հնարավորություն կտա կատարել անհրաժեշտ վերլուծություններ, որի արդյունքների հիման վրա կմշակվեն ու կիրականացվեն շենքերի և շինությունների պահպանմանն ու անվտանգ շահագործմանն ուղղված հիմնավորված ու արդյունավետ ծրագրեր:

2. ՀՀ քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի կատարելագործման ու արդիականացման նպատակով շինարարական նորմերի առաջնահերթ մշակման և վերանայման գործընթացի կանոնակարգման համար ՀՀ կառավարության 2013 թվականի գերակա խնդիրների շրջանակներում, շահագրգիռ մարմինների և մասնագիտացված կազմակերպությունների՝ մասնավորապես նախագծային ինստիտուտների առաջարկությունների հիման վրա կազմվել է շինարարական նորմերի մշակման և վերանայման առաջնահերթության ցանկ: ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013 թվականի փետրվարի 13-ի N 32 հրամանով ստեղծված աշխատանքային խմբի քննարկումների արդյունքում ցանկում ընդգրկված 80 շինարարական նորմերից 2013 թվականի համար առավել առաջնահերթ են ընտրվել թվով 8 շինարարական նորմեր, որոնք մշակվել են ՀՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 4-ի N 340-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարությանը հատկացված 49,672.0 հազ. դրամ գումարի հաշվին: Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի արդիականացման գործընթացը կրելու է շարունակական բնույթ, որի իրականացումը համապատասխան ֆինանսավորում է պահանջում: Հստակեցվել և ՀՀ կառավարություն է ներկայացվել ընթացիկ տարում մշակման ենթակա թվով 9 շինարարական նորմերի ցանկը:

3. ԱՊՀ անդամ երկրների համագործակցության շրջանակներում իրականացվել է թվով 220 միջպետական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի նախագծերի փորձաքննության անցկացման գործընթացը: Փորձաքննության արդյունքում շահագրգիռ մարմիններից և մասնագիտացված կազմակերպություններից ստացված կարծիքները քննարկվել, ամփոփվել և համապատասխան գրություններով ու քվեարկման թերթիկներով ներկայացվել են ԱՊՀ անդամ երկրների շինարարական գործունեության բնագավառում համագործակցության միջկառավարական խորհրդի (Շինարարությունում ստանդարտացման, տեխնիկական նորմավորման և համապատասխանության գնահատման միջպետական գիտատեխնիկական հանձնաժողով /МНТКС- Межгосударственная научно-техническая комиссия по стандатизации, техническому нормированию и оценке соответствия в строительстве/): 2012-2013թթ. իրականացվել է թվով 95 միջպետական ստանդարտների հանրապետությունում գործարկման ժամկետ սահմանելու գործընթացը: 2012 թվականի հունիսի 4-6-ը մասնակցություն է ցուցաբերվել Մինսկում կայացած ՄՆՏԿՍ-ի 40-րդ նիստի աշխատանքներին, ինչպես նաև ԱՊՀ միջկառավարական խորհրդի նիստում

ներկայացվել է «Սեյսմակայուն շինարարության բնագավառում ձեռքբերումները՝ նոր տնտեսական հարաբերությունների պայմաններում» թեմայով զեկույցը:

4. 2012 թվականի նոյեմբերի 12-16-ը կազմակերպվել է Թայեքս գործիքի ներքո միջազգային փորձագետների <Գործող քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգի եվրոպական նորմերին համապատասխանեցում և ազգային մակարդակով 305/2011/EEC կանոնակարգի կիրարկման վերաբերյալ փորձի փոխանակում> թեմայով առաքելությունը, որի շրջանակներում Հայաստանի մասնագետները հնարավորություն ունեցան ծանոթանալու Եվրամիության քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համակարգին, շինարարական արտադրությունում միջազգային ԻՍՕ (ISO) և եվրոպական ԵՆ (EN) նորմերին, ինչը կնպաստի հանրապետությունում իրականացվող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ներդաշնակեցմանն ուղղված բարեփոխումներին:

5. ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետությունում շենքերի սեյսմակայունության ապահովման հայեցակարգը և հայեցակարգից բխող միջոցառումների ժամանակացույցը»: Հայեցակարգի նպատակն է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ շենքերի սեյսմակայունության ապահովման ուղղությամբ համակարգված և արդյունավետ մոտեցումների ցուցաբերման և հիմնավորված գործողությունների իրականացման համար: Հայեցակարգում բերված են՝ շենքերի սեյսմակայունության ապահովմանն ուղղված մոտեցումներն ու առաջնահերթությունները, շենքերի սեյսմակայունության բարձրացմանն ուղղված եղանակներն ու մեթոդները, հայեցակարգից բխող առաջնահերթ իրականացվելիք միջոցառումները:

6. ՀՀ քաղաքաշինության նախարարի և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի համատեղ հրամանով հաստատվել է նշված գերատեսչությունների կողմից մշակված «Սեյսմաշրջանացման (սեյսմիկ գոտևորման) աշխատանքների իրականացման կարգը» (պետական գրանցում է ստացել ՀՀ արդարադատության նախարարությունում 25.03.2013թ. N 32613107):

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

1. «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը.

«Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագիծը և դրանից բխող՝ թվով 7 օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով ՀՀ կառավարություն է ներկայացվել 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 01/11.1/7795-13 գրությամբ:

Օրենքի նախագծի կարևոր նպատակներից է՝ «Փոքր կենտրոնի» գերուրբանիզացման միտումների կանխարգելումը՝ քաղաքաշինական, հողօգտագործման, ինչպես նաև ֆինանսական/տնտեսական լծակների կիրառմամբ այնպիսի պայմանների սահմանման միջոցով, որոնք թույլ կտան կառուցապատողների ներդրումային նախաձեռնություններն ուղղել դեպի Երևանի այլ տարածքներ, որոնցում քաղաքի առաջընթաց զարգացման անհրաժեշտությունը առավել ակնառու է և գերադասելի:

Օրենսդրական փաթեթի ընդունմամբ ակնկալվում է ապահովել ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի 515-Ա որոշմամբ հաստատված և ՀՀ Ազգային Ժողովի կողմից 2013 թվականի մայիսի 23-ի ԱԺՈ-067-Ն որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրով (3.5.1.2. կետ) սահմանված թիրախային նպատակներից մեկի իրագործումը, այն է՝ ***«Երևանին վերադարձնել իր ճարտարապետական շունչը՝ օրենքով բացառելով Երևանի կենտրոնում մայրաքաղաքի պատմությանն ու նկարագրին անհարիր կառուցապատումը»***:

2. Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումներ (կառուցապատման թույլտվությունների մասով).

2012-2013 թվականներին շարունակվել են Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների իրականացման շրջանակներում աշխատանքները՝ հետևյալ ուղղություններով՝

2.1. Քաղաքաշինական ընթացակարգերի պարզեցում.

ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N736-Ն որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել կառուցապատման թույլտվությունների տրամադրումը կարգավորող ՀՀ կառավարության թվով 5 որոշումներում, որոնք ուղղված են ժամկետների կրճատմանը, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը՝ թույլատվական ընթացակարգերի տարբեր փուլերում շրջանցելով կառուցապատող-իրավասու մարմին սուբյեկտների միջև անմիջական շփումը: Մասնավորապես,

- սահմանվել է տեխնիկապես ոչ բարդ և փոքրածավալ օբյեկտների ցանկը, որոնց շինարարության որակի տեխնիկական հսկողությունը կարող է փոխարինվել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով: Նշված հնարավորությունը կրճատում է կառուցապատման ընթացակարգերի պարտադիր քայլերը, ինչպես նաև խնայում կառուցապատողի՝ տեխնիկական հսկիչի պայմանագրային պարտավորությունների կատարման համար նախատեսվող վարձատրության ֆինանսական միջոցները,
- հեռահաղորդակցության ոլորտի մասնավոր հատվածի ներկայացուցիչների մասնակցությամբ փոփոխություններ են կատարվել ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման կարգը սահմանող որոշման մեջ, որով լրացուցիչ կարգավորվում են էլեկտրոնային հաղորդակցության ստորգետնյա համակարգերի տեղադրմանը ներկայացվող պահանջները:

2.2. Կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրում, այդ թվում՝

ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման մեխանիզմների կանոնակարգման հայեցակարգը և համակարգի ներդրման ուղղություններից բխող միջոցառումների ժամանակացույցը» և «ՀՀ քաղաքային համայնքներում քաղաքաշինական էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման համակարգի ներդրման ժամանակացույցը», որով նախատեսվել է համակարգի ներդրման փուլային եղանակ՝ սկզբնական փուլով Երևանում, հաջորդ փուլերով (մինչև 2016 թթ.) այլ խոշոր քաղաքային համայնքներում:

Կառուցապատման էլեկտրոնային թույլտվությունների համակարգի ներդրման շրջանակներում՝

- կառուցապատման ընթացակարգերը կարգավորող բոլոր իրավական ակտերը լրացվել են էլեկտրոնային թույտվությունների տրամադրումն ամրագրող նորմերով,
- Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի TF012782 դրամաշնորհի /ԱՄՆ $500,000/ միջոցների հաշվին սկսվել է համակարգի ներդրման առարկայական փուլը: ՀՀ կառավարության աշխատակազմում ստեղծված աշխատանքային խումբը կազմել է տեխնիկական առաջադրանքը: Ներկայումս այն ըստ գործող կարգի համաձայնեցվել է Համաշխարհային բանկի հետ և ներկայացվել կառավարություն՝ Բարեփոխումների խորհրդի հավանությանն արժանալու համար: Դրանից հետո կհայտարարվի մրցույթ՝ համապատասխան կազմակերպության ընտրության նպատակով:

2.3. Բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի մշակում.

Գործարար միջավայրի բարելավման և կառուցապատման ընթացակարգերի պարզեցման նպատակով կարևորվում է օրինակելի նախագծերի կիրառման պրակտիկան, որը թույլ է տալիս էապես պարզեցնել և էապես կրճատել կառուցապատման ընթացակարգերն, ինչպես նաև խնայել նախագիծ պատվիրելու և փորձաքննություն անցակացնելու համար կառուցապատողի ֆինանսական միջոցներն ու ժամանակը:

Նախարարության պատվերով մշակվել են անհատական բնակելի տների և տնտեսական շինությունների օրինակելի աշխատանքային նախագծերն ու կատալոգը և շինարարական

աշխատանքների իրականացման վերաբերյալ գործնական խորհրդատվությունների Ձեռնարկը: ՀՀ կառավարության կողմից հաստատվել է ՀՀ համայնքներում բնակելի կառուցապատման օբյեկտների բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի և դրանց կատալոգների ներդրման ու կիրառման կարգը:

ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր-Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդի հետ համատեղ մշակվել է էներգաարդյունավետ անհատական բնակելի տների օրինակելի նախագծերի կատալոգը (աշխատանքային նախագծերով): Էներգաարդյունավետ նախագծերով կառուցված առանձնատների շահագործման ընթացքում, ջեռուցման և հովացման հետ կապված ծախսերը («ավանդական» տեխնոլոգիաներով կառուցված տների համեմատությամբ) կնվազեն շուրջ երկու անգամ:

Կատալոգների ներդրման գործընթացը գովազդվել է ԶԼՄ-րով, դրանք տրամադրվել են ՀՀ մարզերին և ՀՀ քաղաքային համայնքներին, ԼՂՀ քաղաքաշինության նախարարությանը, տպագրվել պաստառներ՝ ՀՀ մարզպետարանների և քաղաքապետարանների վարչական շենքերի տեսանելի վայրերում տեղադրելու համար, նկարահանվել է մուլտիպլիկացիոն տեսահոլովակ, նախագծերը տեղադրվել են նախարարության էլեկտրոնային կայքում:

Ներկայումս սկսվել են փոքր և միջին ձեռնարկատիրության օբյեկտների (պահեստների՝ 1500քմ, ջերմատների՝ 1000քմ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման արտադրամասերի, սառնարանային տնտեսության օբյեկտների և չորանոցների՝ 500քմ) բազմակի օգտագործման օրինակելի նախագծերի, կատալոգի և խորհրդատվական ձեռնարկի մշակման աշխատանքները:

2.4.Քաղաքաշինական գործունեության սուբյեկտների իրազեկվածության բարձրացում.

Կառուցապատողների քաղաքաշինական գործունեությանն աջակցելու նպատակով հայերեն և անգլերեն լեզուներով մշակվել և հրատարակվել է <<Կառուցապատողի ուղեցույց>> տեղեկատվական ձեռնարկը, որում հստակ նկարագրված են ոլորտին առընչվող ընթացակարգերը, նշված են դրանց իրավական հիմքերը, տևողությունները և արժեքները: Այն տեղադրված է ՀՀ քաղաքաշինության նախարարության կայքում, հրատարակված և էլեկտրոնային տարբերակները տրամադրվել են մարզպետարաններին ու համայնքներին:

2.5.Համաշխարհային Բանկի <<DoingBusiness>> ծրագրի գնահատականը.

Համաշխարհային բանկի խմբի «Գործարարությամբ զբաղվելը» վարկանիշային դասակարգման սանդղակում 2012 թվականին (ՀԲ 2013 թվականի զեկույց) Հայաստանը «կառուցապատման թույլտվություններ» մասով զբաղեցրել է 46-րդ հորիզոնականը՝ էապես բարելավելով 2011 թվականի նկատմամբ վարկանիշային ցուցանիշը (2011 թվականին գրանցված 95-րդ տողի նկատմամբ):

2013 թվականին (ՀԲ 2014 թվականի զեկույց) կառուցապատման թույլտվությունների բաղադրիչով Հայաստանի դիրքը նահանջել է, թեև կառուցապատման ընթացակարգերում որևէ բարդեցնող պայման՝ թե՛ ընդունած իրավական ակտերով, թե՛ իրական կյանքում, չի արձանագրվել:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ երկրում առկա կառուցապատման ընթացակարգերը գնահատվում են ոչ միայն ըստ օրենսդրությամբ սահմանված նորմերի և միջազգային փորձագետների առաքելությունների ու պաշտոնական մարմինների ներկայացուցիչների հետ նրանց հարցազրույցների, այլ նաև (և՛ առավելապես) մոտ 40 հայտնի և անհայտ (անոնիմ) ռեսպոնդենտների հարցման արդյունքներով, կարելի է եզրահանգել որ ռեսպոնդենտներից շատերի գործելակերպը կամ իրական փորձառությունը շեշտակիորեն տարբերվում են սահմանված ընթացակարգերից՝ ՀՀ օրենսդրական կարգավորումներին լիարժեք չտիրապետելու կամ վարչարարության թերությունների պատճառով:

Համաշխարհային Բանկի <<DoingBusiness>> ծրագրի *www.doingbusiness.org* կայքում տեղադրված <<DB14-Simulator>> աղյուսակը (*http://www.doingbusiness.org/reforms/reform-simulator*) թույլ է տալիս կողմնորոշվել թե որքանով կբարելավվի երկրի դիրքը՝ քայլերի, ժամկետների, ծախսերի կրճատման դեպքում: Հատկանշական է, որ այդ փորձնական աղյուսակում տեղադրելով ՀՀ օրենսդրությամբ նախատեսված 8 քայլը, 27 աշխատանքային օրվան համապատասխանող 39 օրացուցային օրը և մեկ

շնչի հաշվով ՀՆԱ-ից 45.2 %-ը՝ աղյուսակում ներդրած ավտոմատ բանաձևը տալիս է Հայաստանի դիրքի 4-րդ հորիզոնականը:

2. Քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթեր.

2012-2013 թվականի ընթացքում մշակվել են թվով 54 համայնքների գլխավոր հատակագծերի նախագծեր, որից.

- հաստատվել են թվով 18 համայնքների նոր գլխավոր հատակագծերի և թվով 23 գլխավոր հատակագծերի փոփոխությունների նախագծեր.
- թվով 13-ը վերադարձվել են լրամշակման.

Համայնքների գլխավոր հատակագծերի մշակման գործընթացները լուսաբանելու նպատակով՝ ՀՀ բոլոր մարզերում կազմակերպվել են սեմինար խորհրդակցություններ համայնքների ղեկավարների մասնակցությամբ:

Ընդհանուր առմամբ, Հայաստանի Հանրապետության 49 քաղաքային համայնքներից՝ հաստատված գլխավոր հատակագծեր ունեն 42-ը, իսկ 866 գյուղական համայնքներից միայն 30-ն ունեն գլխավոր հատակագծեր:

3. Քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտներ.

ՀՀ կառավարության մի շարք որոշումներում կատարված փոփոխությունները նպատակաուղղված են քաղաքաշինության գործունեության հատուկ կարգավորման ենթակա տարածքներում համայնքների կողմից իրականացվող գործառույթների նկատմամբ միասնական պահանջների և չափորոշիչների սահմանմանը, ինչպես նաև լիազոր մարմնի հետ համաձայնեցման ենթակա փաստաթղթերի թվի և դրանց իրկանացման ժամկետների կրճատմանը:

Մշակվել է «Տաթև» վանական համալիրին համալիրին հարող 19.4 հա տարածքի քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտի տարածքային կազմակերպման էսքիզային նախագիծը (կառուցապատման սխեման): Վանական համալիրի պահպանական գոտիներում և դրան անմիջականորեն հարող տարածքներում առկա են չկանոնակարգված, ճարտարապետական և գեղագիտական հատկանիշներից զուրկ կառույցներ, ինչպես նաև հատկացված, սակայն դեռևս չկառուցապատված հողամասեր: Նախագծի մշակման հիմնական նպատակն է՝ Տաթև վանական համալիրի հարակից տարածքում քաղաքաշինական իրադրության բարելավումը:

ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի գործունեության աշխատանքային ծրագրերի շրջանակներում մշակվել, շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցվել և ՀՀ քաղաքաշինության նախարարի համապատասխան հրամաններով հաստատվել են «Սևանա լճի առափնյա տարածքներում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» և «Սևանա լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց իրականացվելիք տարածական կազմակերպման միջոցառումների ուղեցույցը հաստատելու մասին» փաստաթղթերը:

Միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն է ստացել 2006 թվականին հաստատված և հիմնովին լրամշակված Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագիծը, որով ամրագրվել են Շվեյցարական Թայգեր Դեվ Սուիսս ընկերության կողմից մշակված՝ քաղաքը որպես սպորտային և առողջարանային կենտրոն զարգացնելու հայեցակարգի հիմնադրույթները:

Մշակվել և քննարկման են ներկայացվել Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) աջակցությամբ Կայուն քաղաքաշինական ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվող Գյումրի, Վանաձոր, Դիլիջան և Ջերմուկ քաղաքների զարգացման ծրագրերի վերաբերյալ հայեցակարգային առաջարկություններ:

ՀՀ փոխվարչապետի ղեկավարությամբ գործող հանձնաժողովի աշխատանքների շրջանակում ձևավորված՝ Դիլիջան քաղաքի զարգացմանն ուղղված մի շարք միջոցառումներ (այդ թվում՝ ՀՀ Տավուշի մարզի տարածքային հատակագծման նախագծի և տարածաշրջանի համայնքների գլխավոր հատակագծերի մշակում, սողանքների նախագծահետազոտական աշխատանքների կատարում,

գերեզմանատների շահագործման խնդիրներ, նոր աղբավայրի կազմավորում և այլ) նախարարության կողմից նույնպես ենթակա են կատարման առաջիկա տարիների ընթացքում:

4. Եվրոպայի Խորհրդի հետ համագործակցությունը և Հայաստանի կողմից Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած պարտավորությունների կատարումը.

ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Հայաստանի Հանրապետությունում լանդշաֆտների պահպանության, կառավարման ու պլանավորման ռազմավարությունը և դրանից բխող առաջնահերթ ու միջնաժամկետ միջոցառումները» և «Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկով» նախատեսված «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակ սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության լանդշաֆտի մրցանակի դիպլոմի և արձանիկի էսքիզն ու նկարագիրը հաստատելու մասին» որոշումները:

Հանրության իրազեկվածության բարձրացման նպատակով, սեմինարներ են անցկացվել Հայաստանի բոլոր մարզերում:

Նախարարությունը մշտապես մասնակցում է Եվրոպայի Խորհրդի Տարածական պլանավորման համար պատասխանատու նախարարների կոնֆերանսի (CEMAT) և Բարձրաստիճան պաշտոնյաների կոմիտեի (CSO) աշխատանքներին, ինչպես նաև Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի իրագործմանն առնչվող գործունեությանը:

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

1. Տեսչական ստուգումներ

ՀՀ քաղաքաշինության նախարարի «ՀՀ մարզպետարաններում տեսչական ստուգումներ անցկացնելու մասին» համապատասխան հրամանների համաձայն, ՀՀ քաղաքաշինական պետական տեսչության պետի հանձնարարագրերի հիման վրա, տեսչական ստուգումներ են անցկացվել ՀՀ բոլոր մարզպետարանների քաղաքաշինության վարչություններում, ինչպես նաև տեսչական ստուգումների շրջանակներում՝ ըստ անհրաժեշտության ստուգումներ ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքներում:

Տեսչական ստուգումների արդյունքում կազմվել են արձանագրություններ և քաղաքաշինական պետական տեսչության պետի կողմից կայացվել համապատասխան որոշումներ, որոնցով առաջարկվել է մարզպետներին՝ հատուկ քննարկման առարկա դարձնել տեսչական ստուգման արդյունքները, մասնավորապես՝ պլանային ստուգումների և համայնքներից ներկայացված հողահատկացման հայտերի համաձայնեցման գործընթացներում տեղ գտած բոլոր թերությունները և միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ու իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Համայնքների ղեկավարներին տրվել են պարտադիր կատարման ցուցումներ՝ հողահատկացման, նախագծման ու շինարարության թույլտվությունների և շահագործման ակտերի տրամադրման գործընթացներում հայտնաբերված թերությունների վերացման, ինչպես նաև սահմանված կարգի խախտումով իրականացված հողահատկացումների վերանայման և իրավախախտումներ թույլ տված պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

2. Ընթացիկ և ըստ անհրաժեշտության ստուգումներ.

Ստուգվել է 1484 օբյեկտ, որից 1256-ի նկատմամբ կայացվել է որոշում, իսկ 228-ի վերաբերյալ կազմվել՝ ստուգման տեղեկանք: Կայացված 1256 որոշումներից 1203-ով նշանակվել է տուգանք, իսկ 53-ով տրվել՝ պարտադիր կատարման ցուցում: Բացի այդ, ստուգված օբյեկտներից 439-ում կատարվել է կրկնակի ստուգում և կազմվել տեղեկանքներ: Ընդհանուր առմամբ ստուգումների քանակը կազմել է 1923:

ՀՀ քաղաքաշինական պետական տեսչությունը՝ կայացված 1256 որոշումներով իրավաբանական և ֆիզիկական անձանց նկատմամբ նշանակել է 109.280 հազ. դրամ տուգանք, որը 2012 թվականի բյուջեով նախատեսվածի համեմատ կազմում է 106%, իսկ 2013 թվականի բյուջեով նախատեսվածի համեմատ կազմում է 102%: Նշված տուգանքից 2100.000 դրամը նշանակվել է թվով 18 պաշտոնատար անձանց /համայնքների ղեկավարների/ նկատմամբ:

Նշանակված տուգանքները պետական բյուջե գանձելու համար ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 20 հայցադիմում՝ 2.700 հազ. դրամ բռնագանձման ենթակա գումարով:

Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են 96 ինքնակամ շինարարության դեպքեր: Դրանց վերաբերյալ կազմված համապատասխան գրություններն ուղարկվել են Երևանի քաղաքապետին և համայնքների ղեկավարներին ու տրվել պարտադիր կատարման ցուցումներ՝ ինքնակամ շինությունների կասեցման և հետևանքների վերացման վերաբերյալ, իսկ մի մասի նկատմամբ կատարվել են ըստ անհրաժեշտության ստուգումներ, որոնց արդյունքում կայացվել են որոշումներ:

Շինարարության թույլտվություն տվող իրավասու մարմինների կողմից կառավարության 02.02.02թ. թիվ 91 որոշման համաձայն քաղաքաշինական պետական տեսչություն ներկայացվել է 6094 շինարարության և քանդման թույլտվությանների պատճեններ:

ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, տարբեր կազմակերպություններից և անհատներից ստացվել են 7092 գրություններ, դիմում-բողոքներ և հեռախոսազանգեր՝ քաղաքաշինության բնագավառում վիճահարույց հարցերի վերաբերյալ:

Դրանց հիման վրա քաղաքաշինական պետական տեսչության կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների աշխատակիցների կողմից կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքների հիման վրա տրվել են սպառիչ պատասխաններ: Առանձին դեպքերում կատարվել են ըստ անհրաժեշտության ստուգումներ, կազմվել են արձանագրություններ և կայացվել որոշումներ: Ստուգումների արդյունքներով տրվել են պարտադիր կատարման ցուցումներ՝ խախտումների վերացման ուղղությամբ և հաղորդագրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին՝ ինքնակամ շինարարական աշխատանքների կասեցման և դրա հետևանքների վերացման համար:

Քաղաքաշինական պետական տեսչությունում գործում է «Թեժ գիծ», որով քաղաքացիները հնարավորություն են ունեցել հայտնել կամ ստանալ տեղեկություններ հանրապետության տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության վերաբերյալ: «Թեժ գծով» քաղաքացիների կողմից ստացված 110 ահազանգի հիման վրա իրականացվել են ուսումնասիրություններ և տրվել գրավոր պատասխաններ:

3. Տեսչության անմիջական մասնակցությամբ ուսումնասիրվել են՝

- ՀՀ Շիրակի և Լոռու մարզերի տարածքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների համար Գյումրի քաղաքի «Մուշ 2-2» և «Անի» թաղամասերում պետական բյուջեով իրականացվող 38 շենքերի /1756 բնակարան/, ինչպես նայև վերը նշված մարզերի գյուղական համայքներում կառուցվող մենատների շինարարական աշխատանքների որակը, վեր հանվել և վերացվել թերությունները՝ ապահովելով դրանց մի մասի շահագործման ընդունման գործընթացը,
- ՀՀ մարզերում դպրոցների, մանկապարտեզների և մշակույթի օբյեկտների սեյսմիկ խոցելիության գնահատման ուղղությամբ:

4. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն են ներկայացվել՝

- «Քաղաքաշինական գործունեության վերահսկողություն և հսկողություն իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, ինչպես նաև «Քաղաքաշինության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության մասին», « ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» և մի շարք այլ օրենքների նախագծերը.
- «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կառավարման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի որոշման նախագիծը, «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական

պետական տեսչության կառավարման խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը.
- «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» և «ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի քաղաքաշինական պետական տեսչության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթեթը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումների նախագծերը ՀՀ կառավարության տեսչական բարեփոխումների խորհրդում հավանության արժանանալուց հետո հաստատվել են ՀՀ կառավարության կողմից: Արդյունքում՝ քաղաքաշինական պետական տեսչությունում ներդրվեց ստուգաթերթերով ռիսկի վրա հիմնված ստուգումների իրականացման ընթացակարգ և տեսչությունը ինտեգրվեց Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տեսչական բարեփոխումների գործընթացին:

5. Մշակվել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը միտված է մասնավոր սեկտորի կողմից անհատական բնակարանաշինության և գյուղատնտեսական արտադրության՝ հատկապես փոքր եւ միջին ձեռնարկատիրական գործունեության օբյեկտների շինարարության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ հնարավորինս պարզեցնելով կառուցապատման գործընթացը: Նախագծի ընդունումը թելադրված է ՀՀ կառավարության գործունեության ծրագրում կարեւորված բնակելի շինարարության խթանման եւ գործարար միջավայրի բարելավման պահանջով: Նախագծով նախատեսվում է չլիցենզավորված գործունեություն համարել մի շարք օբյեկտների (մինչև՝ 300մ^2 բնակելի տներ և 150մ^2 օժանդակ շինություններ, 1000 մ^2 ջերմոցներ, 500մ^2 գյուղարտադրության և 100 մ^2 հասարակական նշանակության շինություններ) շինարարության եւ դրանց նկատմամբ իրականացվող տեխնիկական հսկողության իրականացումը:
Օբյեկտների շինարարական աշխատանքներն առանց լիցենզավորված կապալառուի ու տեխնիկական հսկիչի ներգրավման իրականացնելիս՝ կտնտեսվեն հաշվարկված նախահաշվային արժեքի առնվազն 35 %-ը եւ տեխնիկական հսկիչին տրամադրվող գումարը:
Զուգահեռաբար, ի լրումն արդեն իսկ կիրառման մեջ դրված բնակելի տների շուրջ 40 օրինակելի նախագծերի, նախատեսվում է գործողության մեջ դնել նաեւ գյուղատնտեսական արտադրության ՓՄՁ օրինակելի նախագծերի կատալոգը, որի ներդրման միջոցով կառուցման համար չի պահանջվի նախագծման առաջադրանք, նախագծային փաստաթղթերի պատվիրում եւ փորձաքննություն, իսկ շինարարության թույլտվությունը կտրամադրվի եռօրյա ժամկետում: Արդյունքում՝ կառուցապատողը կխնայի զգալի միջոցներ եւ ժամանակ՝ ինչն իր հերթին կնպաստի հանրապետությունում գործարար միջավայրի բարելավմանը, ներդրումային գործընթացի խթանմանը, միաժամանակ հանդիսանալով երկարաժամկետ տնտեսական աճի կարեւոր գրավական:

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

2013 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ քաղաքաշինության բնագավառում գործում են մոտ 2222 կազմակերպություններ, որոնք ունեն թվով 2514 լիցենզիաներ և թվով 4623 ներդիրներ, որից 2012-2013 թվականների ընթացքում շուրջ 1530 լիցենզավորման հայտերի ուսումնասիրման արդյունքում տրամադրվել են թվով 564 լիցենզիաներ և թվով 993 ներդիրներ, այդ թվում՝

շինարարության իրականացում՝ թվով 393 լիցենզիաներ՝ 635 ներդիրներով

քաղաքաշինական փաստաթղթերի մշակում և փորձաքննություն՝ թվով 96 լիցենզիաներ՝ 195 ներդիրներով.

շինարարության որակի տեխնիկական հսկողություն՝ թվով 66 լիցենզիաներ՝ 163 ներդիրներով,

ինժեներական հետազննում՝ թվով 2 լիցենզիա

շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննություն՝ թվով 7 լիցենզիաներ:

վերաձևակերպվել են թվով 37 լիցենզիաներ և թվով 54 ներդիրներ, փոխարինվել թվով 172 ներդիրներ:

ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է 548.25 մլն. դրամ՝ լիցենզիաների տարեկան պետական տուրք:

«Լիցենզավորման կենտրոն» գործակալությունն իրականացրել է բնագավառում գործող շինարարության որակի տեխնիկական հսկողության թվով 254 կազմակերպությունների կողմից ներկայացված հաշվետվությունների ուսումնասիրման, ամփոփման աշխատանքներ, որի արդյունքում բացահայտվել է միայն 2012 թվականի ընթացքում թվով 69 ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից չլիցենզավորված գործունեություն՝

այդ թվում՝

դադարեցված լիցենզիաներով՝ թվով 3 կազմակերպություն

չվերաձևակերպված լիցենզիաներով՝ թվով 2 կազմակերպություն

կասեցված լիցենզիաներով՝ թվով 2 կազմակեպություն

Առանց լիցենզիաների գործունեություն՝ թվով 11 կազմակերպություն

Չլիցենզավորված /տնտեսական եղանակով/ գործունեություն՝ թվով 51 ֆիզիկական անձինք:

Շինարարության որակի տեխնիկական հսկողության, շենքերի և շենք-շինությունների տեխնիկական վիճակի հետազննության եռամսյակային հաշվետվությունները չներկայացնելու, հաշվետվությունները թերի կամ խեղաթյուրված ներկայացնելու, մասնագիտական կազմի բացակայության պատճառով կասեցվել են թվով 228 կազմակերպությունների լիցենզիաներ, որից մինչև օրս կասեցված են թվով 69 կազմակերպությունների լիցենզիաները, իսկ լիցենզիաների տարեկան պետական տուրքը չվճարելու պատճառով՝ թվով 1213 կազմակերպությունների լիցենզիաներ, որից մինչ օրս կասեցված են մոտ 150 կազմակերպությունների լիցենզիաներ:

Մինչև 2011 թվականի հուլիսի 1-ը օրենքի պահանջներին չհամապատասխանեցված (չվերաձևակերպված) շուրջ 120 կազմակերպությունների լիցենզիաների դադարեցման հայցադիմումները ներկայացվել են ՀՀ վարչական դատարան:

Մինչ օրս դատական կարգով դադարեցվել են թվով 113 կազմակերպության լիցենզիաներ:

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմը կազմված է կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներից: Կառուցվածքային ստորաբաժանումների կազմում են 6 վարչություն, 7 ինքնուրույն ստորաբաժանում հանդիսացող բաժիններ և քարտուղարությունը:
Նախարարության առանձնացված ստորաբաժանումներն են քաղաքաշինական պետական տեսչությունը և «Լիցենզավորման կենտրոն» գործակալությունը: Նախարարության համակարգում գործում են «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, «Հայսեյսմշին եւ ԿՊԳՀԻ» ԲԲԸ, «Ճարտարապետության Ազգային թանգարան-ինստիտուտ» և «Ալ. Թամանյանի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

ՀԱՍՏԻՔԱԿԱԶՄԸ, ԿԱԴՐԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմը ներկա պահին ունի 188 հաստիքային միավոր, որից՝

Նախարարության կառուցվածքային ստորաբաժանում	99
Քաղաքաշինական պետական տեսչություն	81
«Լիցենզավորման կենտրոն» գործակալություն	8

Նախարարության վերը նշված 188 հաստիքային միավորներից 169-ը քաղաքացիական ծառայության պաշտոններ են: